

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Վահան ԴՈՂՈՍՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ասպիրանտ

Բանալի բառեր. ռիսկերի ձևավորման փաստաթղթավորում, ռիսկերի կառավարչական հաշվետվություններ, ռիսկ մենեջմենթ, ռիսկերի ֆինանսական և կառավարչական հաշվառման փոխկապակցում

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, «Հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ, դրամական արտահայտությամբ, տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով»¹: Բնակաբար, եթե ֆինանսական ռիսկերի հաշվառման անհրաժեշտության գծով օրենսդրական պահանջ չի ներկայացնում, ուստի այն առևտրային կազմակերպություններում իրականացման պարտադիր պահանջ չունի և չգտնում լայնամասշտաբ կիրառելիություն: Սակայն, նաև պետք է ընդգծել, որ ֆինանսական ռիսկերի հաշվառման բացակայությունը առևտրային կազմակերպություններում միայն դրանով չի պայմանավորվում: Համաձայն օրենսդրական պահանջի, հաշվառման առարկան պետք է չափելի լինի դրամային արտահայտությամբ, մինչդեռ մասնագիտական գրականության մեջ չի ձևավորված ընդհանուր կարծիք, թե ինչպիսի չափման միավորներով են ներկայացվելու ֆինանսական ռիսկերը²: Բացի այդ, հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրական դաշտը նաև պահանջում է համակարգված փաստաշրջանառության կազմակերպում, որը նույնպես հիմնախնդիր է հանդիսանում առևտրային կազմակերպություններում: Եթե, առևտրային բանկերում ռիսկի մենեջմենթի գծով կազմվում են կանոնակարգային փաստաթղթեր և դրան հետևում են ռիսկերի գնահատման փաստաթղթավորված դիտարկումներ և հաշվետվություններ, բնավ չի նշանակում, որ ռիսկերի արձանագրման, կանխարգելիչ գործողությունների գնահատումների գծով ներկայացվում են համակարգված տեղեկատվական հոսքեր, որոնք անընդհատության և փոխկապակցվածության սկզբունքներով են կազմվում, ինչպես որ դա արվում է հաշվապահական հաշվառման համակարգում:

¹ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, հոդվ. 5

² Тэпман Л.Н. Риски в экономике: Учеб.пособие для вузов/ Под ред. проф. В.А.Швандара. – М.:ЮНИТИ-ДАНА, 2002, стр. 58-59.

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ֆինանսական ռիսկերի արժևորված տնտեսական արդյունքների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառումը ընդհանրապես չի իրագործվում ոչ միայն բանկային, այլև տնտեսության իրական հատվածում գործող առևտրային կազմակերպություններում, քանի որ այստեղ ռիսկ մենեջմենթը հիմնականում սաղմնային վիճակում է և հետևաբար տեղեկատվություն ներկայացումը ռիսկերի գծով կառավարչական որոշումների կայացման համար՝ այդքան էլ պահանջված չէ: Փոխարենը կազմվում են ֆինանսական հաշվետվություններ, որոնց նպատակը կազմակերպության ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների համակարգված ներկայացումն է, որն օգտակար է օգտագործողների լայն շրջանակի կողմից տնտեսական որոշումներ կայացնելու համար: Ֆինանսական հաշվետվությունները նաև ցուցադրում են կազմակերպության ղեկավարության կողմից իրենց վստահված ռեսուրսների կառավարման արդյունքները³:


Հետևաբար, առևտրային կազմակերպությունների կողմից կազմվող ֆինանսական հաշվետվությունները կարող են տեղեկատվական հիմք հանդիսանալ ռիսկերի ճանաչման և գնահատման գործում, նամանավանդ, երբ միջազգային ստանդարտներով ամրագրվում է, որ կազմակերպությունները ֆինանսական հաշվետվություններից դուրս կարող են ներկայացնել ղեկավարության կողմից իրականացվող ֆինանսական ուսումնասիրություն, որը նկարագրում և բացատրում է կազմակերպության ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի հիմնական հատկանիշները: Տրամադրվող նման տեղեկատվությունը կարող է ներառել ֆինանսական արդյունքները որոշող հիմնական գործոնները և ազդեցությունները, ներառյալ բիզնես միջավայրի փոփոխությունները և մենեջմենթի արձագանքը այդ փոփոխություններին առնչվող արդյունքներին:⁴ Այս առումով, առևտրային կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառման միջազգային չափորոշիչներով կազմվող ֆինանսական հաշվետվությունները կարող են օգտագործվել ռիսկ մենեջմենթի շրջանակներում որպես տեղեկատվական աղբյուրներ և կառավարչական որոշումների կայացման հիմքեր (տես գծ. 1):

Կարևորվում է նաև ֆինանսական ռիսկերի տեղեկատվության տրամադրման անընդհատության ապահովումը: Անընդհատության սկզբունքի կիրառումը ենթադրում է ոչ թե հաշվապագական հաշվառման տեղեկատվության անխափան (անտնդհատ) ներկայացում որոշումներ կայացնողներին,

³ Հաշվապահական հաշվառման ստանդարտ 1, “Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում”, Երևան, 2011. կետ 9

⁴ Նույն տեղը, կետ 13

այլ համուզմունքի առկայություն, որ տեսանելի ապագայում առևտրային կազմակերպությունը պահպանելու է իր անխափան գործունեությունը և կտրուկ չի նվազեցնելու տնտեսավարման ընթացքը: Այս հանգամանքը չափազանց կարևորվում է ֆինանսական ռիսկերի հաշվառման պարագայում, քանի որ ռիսկերը միտված են տեսանելի ապագայում կազմակերպության տնտեսական գործունեության անբարենպաստ արդյունքների հավանական ձևավորմանը:



Գծապատկեր 1. Ֆինանսական ռիսկերի հաշվապահական հաշվառման տեղեկատվական հոսքերի կիրառման առաջարկվող մեխանիզմը առևտրային կազմակերպություններում⁵

Այսպես, համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների, կազմակերպության գործունեության անըդիատության ենթադրության հիմնավորման համար անհրաժեշտություն է առաջանում

⁵ Կազմվել է հեղինակի կողմից:

հաշվի առնել տեսանելի ապագային վերաբերող հասանելի ամբողջ տեղեկատվությունը, որն ընդգրկում է հաշվետու ժամանակաշրջանից հետո, ոչ պակաս, քան տասներկու ամիս: Նախքան անընդհատության հիմունքը տեղին համարելը, ստանդարտն առաջարկում է դիտարկել գործունեների լայն շրջանակ, որոնք առնչվում են կազմակերպության ընթացիկ և ակնկալվող շահութաբերության, պարտավորությունների փոխհատուցման կարողությունների և այլընտրանքային պոտենցիալ ֆինանսավորման աղբյուրների հետ:⁶


Հետևաբար, անընդհատության սկզբունքով կազմված ֆինասական հաշվետվությունների տեղեկատվությունը օգտակար է համարվում ռիսկերի գծով կառավարչական որոշումներ կայացնելիս, քանի որ նման տեղեկատվությունը ներկայացնելով հաշվետու ժամանակաշրջանի տնտեսական գործունեության արդյունքները, հաշվի առնում նաև տեսանելի ապագայում տնտեսավարման ընթացքը: Եթե առևտրային կազմակերպությունը շարունակելու է իր գործունեությունը տեսանելի ապագայում և միտում կամ անհրաժեշտություն չունի լուծարվելու, կամ էլ էականորեն կրճատելու տնտեսավարման ծավալները, ապա ֆինանսական ռիսկերի վերլուծությանը առընչվող տեղեկատվական աղբյուր կարելի է համարել միջազգային չափորոշիչների պահանջներով կազմված հաշվետվական փաթեթը, որն առնչվում է ակտիվներին, պարտավորություններին, կապիտալին, ֆինանսական արդյունքներին, դրամական հոսքերին (տես գծապատկեր 1):

Ռիսկերին առնչվող տեղեկատվության արժանահավատության ապահովման հաջորդ քայլը կառավարչական վերլուծության իրականացումն է, երբ հետազոտվող երևույթը տրոհվում է առանձին տարրերի, ինչը հնարավոր է դարձնում գրանցել դրանցից յուրաքանչյուրին ուսումնասիրվող համակցության մեջ՝ բացահայտելով վերլուծվող երևույթի միտումներն և օրինաչափությունները: Վերլուծության ընթացքում, տրոհմանը զուգընթաց, իրականացվում է նաև համադրում՝ որակական եզրահանգումներ կատարելու և կառավարչական որոշումներ ընդունելու նպատակով:

Առևտրային կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի կառավարչական վերլուծության գծով մեր կողմից առաջարկվում են իրավիճակային գործակիցներ (տես գծապատկեր 1), որոնք հաշվարկվում են ավանդական սահմանափակող գործակիցների ընդունելի սահմանային մեծությունների վերանայման ճանապարհով: Այսպես, առևտրային կազմակերպություններում ավանդաբար կիրառվող ֆինասական վիճակը բնորոշող (իրացվելիության, գործարար ակտիվության, շահութաբերության, կապիտալի

⁶ Նույն տեղը, կետ 26

ինքնաբավության) գործակիցների մեծությունների սահմանաչափերը վերանայվում են Δa մեծություններով, երբ վերլուծվում են տեսանելի ապագայում տնտեսավարման բնականոն ռիսկային գոտին: Սակայն, երբ քննարկման է ենթարկվում առևտրային կազմակերպության գործունեության հավանական կրիտիկական ռիսկային միջավայրի սցենարը, ապա արդեն իսկ ճշգրտված բնականոն նորմատիվային գործակիցների սահմանաչափերը վերանայվում են Δb մեծություններով: Իսկ անթույլատրելի ռիսկային սցենարների պարագայում ֆինանսական ռիսկերի գնահատման գործակիցները ևս մեկ անգամ ճշգրտվում են, արդեն Δc մեծություններով, վերջո հանդես գալով հավելյալ բաղադրիչներով (տես գծապատկեր 2)։



Գծապատկեր 2. Սահմանային մեծությունների վերանայմամբ ֆինանսական ռիսկերի գնահատման գործակիցների ձևավորման ընթացքը (կազմվել է հեղինակի կողմից):

Առևտրային կազմակերպություններում սահմանային մեծությունների վերանայմամբ ֆինանսական ռիսկերի գնահատման գործակիցների ձևավորման մոտեցումը հնարավորություն է տալիս ռիսկ մենեջմենթին կատարելու համեմատական վերլուծություն և կատարելու սթրես սցենարային գնահատումներ, որը չափազանց կարևոր է ռիսկերի կրճատման, հավանական անբարենապաստ արդյունքների դիվերսիֆիկացված ձևավորման, սպասվող կորուստներից ապահովագրման ուղղություններով կառավարչական որոշումներ կայացնելիս (տե՛ս գծապատկեր 1): Համակարծիք ենք այն հեղինակների հետ, որոնք առաջարկում են ֆինանսական ռիսկերի կառավարչական որոշումներ կայացնել փուլերով՝ հիմնախնդրի «ախտորոշում - իրավիճակի վերլուծություն - սցենարային գնահատումներ - որոշումներից բխող վերջնարդյունքներ շղթայով»⁷ հետևյալ փուլերով։

⁷ Ղափոյան Ա., Կուրդինյան Ռ., Վարկային պորտֆելի ռիսկի գնահատման մեթոդաբանական հիմնահարցերը, Ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները, ՀՊՏՀ գիտաժողով, 2013 թ. էջ 254

- իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության ապահովում,
- հիմնախնդրի ախտորոշում,
- ռիսկային սահմանափակումների ձևակերպում,
- իրավիճակային վերլուծություն,
- սցենարային գնահատումներ,
- կարգավորիչ-սահմանափակող ֆինանսական գործակիցների կիրառում,
- կառավարչական որոշումներից բխող արդյունքների մոնիտորինգ:

Մասնագիտական գրականությունում ֆինանսական ռիսկերի կառավարչական վերլուծության տեղեկատվական ապահովվածությունը առաջարկվում է ձևավորել նաև հաշվեկշռված համակարգով, որը խմբավորում է կառավարչական աուդիտի գործիքակազմի կիրարկման առավելագույն բալերն ու դրանց շեղումները (տես աղյուսակ 1): Նման առաջարկը հիմնավորվում է նրանով, որ նման տեղեկատվությունը արտացոլում է ռիսկերի կառավարման դինամիկ փոփոխությունները, ուստի և կառավարչական աուդիտի գործիքակազմի կիրառման առավելագույն բալերը փոփոխության են ենթարկվում ի օգուտ այս կամ այն ոլորտային խմբերի (ռիսկերի ախտորոշում, կառավարչական գործառնություն, որոշումների կայացում), որոնք ներկայացվում են ֆինանսական ռիսկերի աուդիտի արդյունքների տեղեկատվության հաշվեկշռված համակարգը բնութագրող աղյուսակի ձախ կողմում:⁸ Բացի այդ, բերվում են փաստարկներ, որ նման պարագայում կիեշտանա նաև առավելագույն բալերի արդեն իսկ փոփոխված կառուցվածքի համեմատումը ֆինանսական ռիսկերի կառավարման փաստացի ձեռքբերումների հետ, որն ներկայացված է աղյուսակ 1-ում տեղեկատվական հաշվեկշռված համակարգի աջ կողմում: Սակայն, մեր կարծիքով, ֆինանսական ռիսկերի գնահատման բալային համակարգի կիրառումը օժտված է որոշակի պայմանականությամբ, քանի որ այս դեպքում մի կողմից պետք է հիմնավորել կիրառվող բալային սանդղակի մասշտաբը, մյուս կողմից, որն ավելի կարևոր է, ներկայացնել հիմնավոր փաստարկներ կառավարչական աուդիտի գործիքակազմի առավելագույն բալերի և դրանցից ձևավորվող շեղումների իրատեսական հաշվարկային արդյունքների գծով (տես աղյուսակ 1): Ուստի, նպատակահարմար ենք համարում ռիսկերի չափման և որակական արժևորման համար կիրառել ոչ թե պայմանականորեն որոշված բալեր, այլ ֆինանսական գործակիցներ, որոնք վերահաշվարկվում են ավանդականորեն կիրառվող ֆինանսական դրության ցուցիչների հիման վրա և ունեն գնահատման հստակ տեղեկատվական աղբյուրներ, ինչպիսիք են կառույցներում միջազգային չափանիշներով կազմվող հաշվապահական հաշվետվությունները:

⁸ Անդրեասյան Ա., Բանկային ռիսկերի կառավարչական հաշվառման ներդրման ուղիները, // Այլընտրանք գիտական հանդես, 2016 հոկտեմբեր դեկտեմբեր, էջ 52

Աղյուսակ 1. Ֆինանսական ռիսկերի կառավարման աուդիտի արդյունքների տեղեկավորության հաշվեկշռված համակարգ⁹

Կառավարչական աուդիտի գործիքակազմի կիրառված առավելագույն բալերը	Արժեք	Փաստացի բալերն ու առավելագույնից շեղումները	Արժեք
Կառավարելի ռիսկերի բացահայտում	13	Կառավարչական աուդիտի փաստացի բալեր	71
Մասամբ կառավարելի ռիսկերի բացահայտում	5	ռիսկերի ախտորոշում	18
Անկառավարելի ռիսկերի բացահայտում	7	կառավարչական գործառնություններ	35
Վնասների փոխհատուցման պահուստների ձևավորում	5	կառավարչական որոշումներ	18
Շեղումների վերլուծություն	12	Առավելագույն բալերից շեղումներ	29
Կանխարգելիչ գործառնություններ	28	ռիսկերի ախտորոշում	7
Որոշումների մոնիտորինգ	9	կառավ. գործառնություններ	10
Որոշումների արդյունավետության գնահատում	15	կառավարչական որոշումներ	12
Հաշվետվողականություն	6		
Ընդամենը	100	Ընդամենը	100

Այսպիսով, ֆինանսական ռիսկերի հաշվառումն և վերլուծությունը առևտրային կազմակերպությունների կառավարման համակարգում պետք է իրականացնեն մի շարք կարևորագույն գործառնություններ.

Առաջին, հաշվապահական հաշվառումը իր առջև խնդիր պետք է դնի մշակելու ֆինանսական ռիսկերի ձևավորման հաշվետվական համակարգ, որը տեղեկատվական աղբյուր է հանդիսանալու ռիսկերի կառավարման համար: Այս առումով, անընդհատության սկզբունքով անհրաժեշտություն է ծագում կազմակերպելու ֆինանսական ռիսկերի ձևավորման արդյունքների տնտեսական չափում և փաստաթղթային արձանագրում, որոնք արդյունավետ գործիքներ են հանդիսանում ռիսկային տնտեսական հետևանքների մոնիտորինգի համար:

Երկրորդ, արդիական է համարվում ավանդական հաշվառման փաստաթղթաշրջանառությանը զուգահեռ, կազմակերպել նաև ֆինանսական ռիսկերի ձևավորումը արտացոլող փաստաթղթաշրջանառություն, որը կարելի է ոչ միայն առևտրային կազմակերպությունների հաշվետվողականության գործելաոճի, այլև վերահսկողական գործառնությունների կազմակերպման համար: Անընդհատության սկզբունքով ֆինանսական ռիսկերի փաստաթղթավորման համակարգի ձևավորումը, մեր կարծիքով, թույլ կտա կազ-

⁹Անդրեասյան Ա., Բանկային ռիսկերի կառավարչական հաշվառման ներդրման ուղիները, // Այլընտրանք գիտական հանդես, 2016 հոկտեմբեր դեկտեմբեր, էջ 51

մակերպությունների մենեջմենթին օպերատիվ արձագանքելու չարդարացված ռիսկային գործարքներին և ժամանակին կանխարգելելու հավանական վնասները:

Երրորդ, ռիսկերի ձևավորման տեղեկատվության վերլուծությունը իր առջև խնդիր է դնելու հետևողականորեն մեկնաբանելու բացահայտված ռիսկային հետևանքների շրջանակը, այդ նպատակով օգտագործելով առանձնահատուկ չափանիշներ և ցուցանիշներ: Ընդ որում, ֆինանսական ռիսկերի ձևավորման ցուցանիշների հաշվարկը նպատակահարմար է իրականացնել գործող ավանդական ֆինանսական վերանայված գործակիցներով, որոնք նույնպես սահմանային չափիչներով են հանդես գալու: Ֆինանսական ռիսկերի ձևավորման ցուցիչները նպատակահարմար է կիրառել առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեության սթրես սցենարային միջավայրում, բացահայտելու համար, թե տեսանելի ապագայում կազմակերպության տնտեսվարման գործընթացը ռիսկային ինչպիսի միջավայրում կհայտնվի:

Չորրորդ, ֆինանսական ռիսկերի հաշվապահական հաշվառման տեղեկատվական հոսքերի կիրառման առաջարկվող մեխանիզմը առևտրային կազմակերպություններում պետք է փոխկապակցի ֆինանսական և կառավարչական հաշվառման համակարգերը այնպես, որ դրանք ներկայացվեն որոշումների կայացման տեղեկատվական ապահովման միասնական ձևաչափով: Ընդ որում, տեղեկատվական հոսքերի այդ ձևաչափը պետք է հըստակ ներկայացվի “ֆինանսական հաշվետվություններ-ռիսկերի ձևավորման կառավարչական հաշվետվություններ – ռիսկերի գծով որոշումների կայացման հաշվետվություններ” շղթայով, որը պահանջում է առևտրային կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի կառավարչական հաշվառման համակարգային ներդրման հիմնախդիրների լուծումներ:

Վահան ՊՈՂՈՍՅԱՆ

Ֆինանսական ռիսկերի հաշվառման և վերլուծության գործառույթները կազմակերպությունների կառավարման համակարգում

Բանալի բառեր. ռիսկերի ծնավորման փաստաթղթավորում, ռիսկերի կառավարչական հաշվետվություններ, ռիսկ մեներջմենթ

Հաշվապահական հաշվառման ուսումնասիրման առարկան ավանդաբար հանդիսացել են կազմակերպությունների ակտիվները, կապիտալը, պարտավորությունները, ֆինանսական արդյունքները, իսկ ֆինանսական ռիսկերը և դրանց փաստացի կամ ակնկալվող տնտեսական արդյունքները չեն ընդգրկվել հաշվառման գործընթացների շրջանակներում մի շարք պատճառներով: Նախ, ռիսկերի կառավարման գործընթացը համեմատաբար նոր է և ընդամենը երկու տասնայակ տարիների պատմություն ունի: Ուստի երբևէ անհրաժեշտություն չի առաջացել դրանք արձանագրելու, հաշվառելու, և նամանավանդ՝ հաշվետվական տեղեկատվությամբ ներկայացնելու: Բացի այդ, դեռևս տեսության մեջ և գործնականում դժվարություններ և տարակարծություններ են առաջանում ֆինանսական ռիսկերի ճանաչման, արժևորման և չափման հարցերում:

Ваган ПОГОСЯН

Функции учета и анализа финансовых рисков в системе управления предприятий

Ключевые слова: документация формирования рисков, управленческий отчетность рисков, риск менеджмент, взаимосвязь финансового и управленческого учета рисков

Традиционно предмет исследования финансового учета являлось активы, капитал, обязательства, финансовые результаты предприятий, а финансовые риски и вероятные негативные последствия от рисков операций до сих пор не включены в систему управленческого учета. В статье обсуждаются пути внедрения документооборота и отчетности по формированию финансовых рисков в коммерческих организациях, что даст возможность для эффективного проведения управленческого анализа и принятий обоснованных решений по риск менеджменту.

Vahan POGHOSYAN

Functions of accounting and analysis of financial risks in enterprise management system

Key words: documentation formation risk, risk managerial statements, risk management, relationship of financial and management accounting risks

Traditionally, the subject of study of financial accounting are assets, capital, liabilities and financial results of enterprises. However, the financial risks likely with negative consequences of risky operations has not yet been included in the managerial accounting system of commercial entities. This article discusses implementation ways for documentation and statement presentations of financial risks formation in commercial organizations, which will promote for effective management analysis and thorough decision making on risk.